Nadia Wright. *Respected Citizens. The History of Armenians in Singapore and Malaysia.* Melbourne: Amassia Publishing, 2003, 350 pp.

Արմատներով հայ Նադիա Ռայթը[1]*, որոշ ժամանակ ապրելով Սինգապուրում, հաւանաբար արեան կանչով, մտադրուել է անգլիախօս հասարակութեանը ներկայացնել արարող, ստեղծագործող, Մալայեան թերակղզու տարբեր բնակավայրերի պատմա-մշակութային կեանքում խոր հետք թողած եւ ազգային ինքնութեան պահպանման նոր շահագրգռութիւններով օժտուած հայազգի ժառանգների գործունէութիւնը:*

Ուսումնասիրութեան վերնագիրը՝ «Յարգուած հայեր», արդէն իսկ ընթերցողին նախապատրաստում է հետեւելու հայկական ամէնից քիչ ուսումնասիրուած գաղթօջախի պատմութեանը, կեանքի ու ճակատագրի սերտ առնչութեամբ պայմանաւորուած այլազգիների կողմից յարգուած լինելու օրինաչափութեանը: Գրքի տարողունակ բովանդակութիւնը յատկացուած է հայութեան բազմաճիւղ գործունէութեանը՝ քայլ առ քայլ բացայայտելով ժամանակի պահանջներին համընթաց տնտեսութեան այս կամ այն ոլորտում նրանց ստեղծած արժէքների կարեւորութիւնը:

Տասնուվեց տարուայ յամառ ու տքնաջան փնտրտուքների արդիւնքում Ռայթը ձեռք է բերել հարկ եղած տեղեկութիւնները: Նիւթը համակողմանի համակարգելու սկզբունքով եւ որակական անցումներ կատարելով՝ հասարակութեան դատին է յանձնել արժէքաւոր մի հետազօտութիւն, որի աղբիւրագիտական ատաղձը՝ Սինգապուրի եւ Աւստրալիայի ազգային արխիւները, շաղկապուած են ժամանակի մամուլի տեղեկութիւններով, կենդանի մարդկանց յուշագրութիւններով, մասամբ՝ Նոր Ջուղայի, Կալկաթայի, Մադրասի հայ եկեղեցիներում պահպանուած վաւերագրերով: Աշխատանքի լիարժէքութիւնն ապահովելու համար Ն. Ռայթը հայախօս միջավայրի օգնութեամբ կարողացել է տեսադաշտում պահել այն սնող հնարաւոր բոլոր աղբիւրները: Այսպիսով, հեղինակի տրամադրութեան տակ կուտակուած հարուստ տեղեկատուութիւնն իմաստաւորուել եւ յստակ ու կուռ կառուցուածքի շնորհիւ ամփոփուել է մի կարեւոր մենագրութիւնում: Աւելացնենք, որ մտքի յստակ ձեւակերպումները, անգլերէնի կատարեալ իմացութեամբ մատուցուած շարադրանքը ուսումնասիրութիւնը դարձրել են դիւրընկալելի:

Բուն աշխատանքը բաղկացած է ներածութիւնից, չորս գլուխներից, բազմաթիւ ենթավերնագրերից, եզրակացութիւնների յաւելուածներից ու մատենագիտական ընդարձակ ցանկից: Բովանդակալից աղիւսակները, բարձր մակարդակով մշակուած գծագրերը, քարտէզները եւ վիճակագրական պատկերը մատուցող տուեալները ապահովում են աշխատանքի կատարելութիւնը:

Ներածութեան մէջ ձեւաւորուած անհատականութեամբ օժտուած հեղինակը փորձել է հայերի մասին անտեղեակ աշխարհին ներկայացնել հայոց պատմութեան տարբեր շրջափուլերը, յարափոփոխ վերելքներն ու վայրէջքները՝ հպարտօրէն արձանագրելով թշնամական օղակով շրջապատուած հերոսական ժողովրդի գոյատեւման փաստը:

Ինչպէս յայտնի է, XVII դ. սկզբին Շահ-Աբասի կողմից Արեւելեան Հայաստանից Իրան բռնի կերպով գաղթեցուած հայ ազգաբնակչութիւնը տեղաբաշխուեց Սպահանում եւ Նոր Ջուղայում: Պարսկահայ գաղթօջախի առեւտրա-մշակութային բարգաւաճ կեանքը 1722 թ. աֆղանների կողմից երկիրը նուաճելու հետեւանքով հիմնականում խափանուեց: Մենագրութեան մէջ շօշափուած են այդ աղէտի պատճառած վնասի հետեւանքով հայերի՝ նոր գաղթօջախների որոնման ջանքերը եւ նրանց հայեացքի սեւեռումը դէպի Հնդկաստան՝ Ագրա, Մադրաս, Կալկաթա, ապա Մալայեան թերակղզի: Այս իրողութեամբ հեղինակը կարողացել է պատճառաբանել գաղթօջախի՝ պարսկահայ կառուցուածքի էութիւնը:

Գաղտնիք չէ, որ Մալայեան թերակղզին եւ նրան յարող կղզիները Հնդկաստանից դէպի Չինաստան տանող ճանապարհին ռազմավարական կարեւոր հանգուցակէտեր էին: Հեղինակի ուշադրութիւնից չի վրիպել այդ ճանապարհին ընկած հայաբնակ ոչ մի վայր: Անգամ Մալակայում սակաւաթիւ, բայց ներդաշնակ համակեցութեամբ հայերով բնակեցուած լինելու պարագան նա փաստում է տեղում երկու գերեզմանակոթողների առկայութեամբ (էջ 13):

Պենանգն ու Սինգապուրը Մալայեան թերակղզուն պատկանող աշխարհագրական այն յենակէտերն էին, որոնց ապագան խոստումնալից ու հեռանկարային էր, ուստի այնտեղ ձգողական ուժով տարբեր ազգութիւնների բնակուելու միտումը միանգամայն բնականոն էր:

Բազմաթիւ նոր փաստերի, արխիւային վաւերագրերի լայն ընդգրկման սկզբունքով, Ն. Ռայթը, ներառելով հայերին, ճշտուած աղիւսակներով եւ տոկոսային յարաբերութեամբ ներկայացնում է Սինգապուրի բնակչութեան աճի պատկերը: Այսպէս, 1820 թ. բնակչութեան ընդհանուր թիւը 10.383 էր: Հայերն ընդամէնը 16 հոգի էին, 1862 թ.՝ 44, իսկ 1901 թ. նրանց թիւը հասել էր 79-ի, որոնցից երեքը քաղաքի քսան խոշոր առեւտրականների դասին էին պատկանում (էջ 33):

Ըստ երեւոյթին, գաղթօջախը մասամբ համալրուել է 70-ական թուականներին Լիբանանից, Բրիտանիայից, Եւրոպայից եւ ԱՄՆ-ից տեղափոխուած հայերով:

Ն. Ռայթի դիտարկումներով՝ ժամանակի ընթացքում հայ էթնոսի նուազման միտումն ակնյայտ էր: Փաստերի մէջ խորանալով՝ նա բացայայտում է երեւոյթի դեմոգրաֆիկ պատկերն ու տալիս դրա պատճառները.

1) տրոպիկական հիւանդութիւններից մահուան դէպքեր,

2) խառն ամուսնութիւնների հետեւանքով ազգային դիմագծի կորուստ,

3) նոր գաղթօջախներ փոխադրուելը:

Ուսումնասիրութեան մէջ հեղինակը շեշտելով այլազգիների համեմատ հայերի սակաւութեան փաստը՝ չի մոռանում ընդգծել տնտեսութեան մէջ (յատկապէս առեւտրական ոլորտում) նրանց աշխոյժ գործունէութիւնը: Շահ-Աբասի ժամանակ առեւտուրը հայերի մենաշնորհային զբաղմունքն էր եւ նոր միջավայրում, օրգանապէս շարունակուելով, ձեռք էր բերել հմտալից ու առանցքային արժէք:

Հայերը Սինգապուրի քաղաքաշինութեան եւ կենսապահովման կարեւոր հաստատութիւնների՝ հիւրանոցների կառուցման առաջնեկներից էին: Մարտին, Տիգրան եւ Աւետ Սարգսեանների ջանքերով հիմնադրուել է հիւրանոցային մի համալիր, որը, ժամանակի ընթացքում ընդարձակելով իր գործունէութեան դաշտը, ճանաչուել է EXO անգլիական անունով՝ հարուստ եկամուտ ապահովելով տէրերի համար: Ցաճախորդներին շահագրգռելու նպատակով՝ նրանք մշակել են միջոցառումների լայն ցանց. ստեղծել են պարահրապարակներ, խաղասրահներ, հանգստեան գօտիներ, իսկ

1 Ն. Ռայթը Արեւմտեան Հայաստանից Եգիպտոս գաղթած հայ մօր՝ Վերա Դեքմէջեանի եւ նորզելանդացի հօր ժառանգ է:

© National Library of Armenia

չքեղ տօնահանդէսների հրապարակ ապահովելու համար կառուցել համապատասխան սրահներ, հրաւիրել բարձրակարգ նուագողներ: Փաստօրէն, 1900 թ. հիւրանոցն ունեցել է 130 ննջասենեակ, իսկ սպասարկող անձնակազմը անցել է 300-ից:

Գրքի բովանդակութիւնից պարզւում է, որ հայերը դասուել են ուներեւոր քաղաքացիների շարքը եւ, որպէս այդպիսիք, զբաղեցրել են քաղաքի կենտրոնական փողոցների տարածքը:

Գրախօսուող աշխատանքում ընդարձակ էջեր են նուիրուած Արիստակէսի, Սարգսի, Մկրտչի, Մովսէսի, Աբգարի, Ստեփանի, Զաքարիայի, Մարտիրոսի, Կարապետի ընկերութիւնների կարողութիւնները եւ Սինգապուրի առեւտրական աշխարհում նրանց զբաղեցրած դիրքը բնութագրելուն (էջ 94-114):

Ն. Ռայթն իր գրքում տալիս է հայերի ֆինանսական կարողութիւնների ձեւաւորման (էջ 60-66), հիւրանոցների, առեւտրական ընկերութիւնների ստեղծման պատմութիւնը:

Հեղինակի ուշադրութեան կիզակէտում Թովմաս Ռաֆլին է՝ մեծ կարողութիւնների տէր մի անձնաւորութիւն, որն արեւելա-հնդկական ընկերութեան անդամ էր: Ստեղծելով հիւրանոցային լայն ցանց՝ նա արժանացել էր կառավարութեան մեծագոյն յարգանքին: Այսօր էլ նրա հիմնադրած կառոյցները կարեւոր դեր են կատարում առեւտրի, զբօսաշրջութեան եւ այլ բնագաւառներում:

Ն. Ռայթի գրքում յիշատակւում է բուսաբան Ագնէս Ժոաքիմը (Յովակիմեան), որը բոյսերի խաչաձեւման եղանակով ստացել էր իր անունով կոչուած ծաղկի մի տեսակ: Տեղի ժողովրդի կողմից այն ընկալուեց իբրեւ Սինգապուրի ազգային ծաղիկ ու մշակուեց Մալայեան երկրամասի բոլոր այգիներում (էջ 145): Կառավարութիւնը Ժոաքիմին պարգեւատրեց բազմաթիւ մրցանակներով:

Սինգապուրի հայերից շատերը եղել են յայտնի բժշիկներ, իրաւաբաններ, զբաղուել են նաեւ լուսանկարչութեամբ ու ոսկերչութեամբ (էջ 139-142):

Ն. Ռայթը կազմել է տեղի նշանաւոր հայերի՝ Կարապետեանների, Եդգարեանների, Գաբրիէլեանների, Գալստեանների, Յակոբեանների, Յովակիմեանների, Յովհաննիսեանների, Մարտիրոսեանների, Մովսիսեաններին, Պօղոսեանների եւ այլոց տոհմածառերը (էջ 180-304):

Հեղինակն անդրադառնում է նաեւ համայնքի հոգեւոր կեանքին: Հայկական առաջին՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու հիմնաքարը դրուել է 1822 թ. Պենանգում. հանգանակուած գումարներով այն կառուցուել է 1824 թ.՝ դառնալով համայնքի կայացման կարեւոր գործօն:

Ս. Գրիգոր Լուսաւորչի անունով մէկ այլ եկեղեցի կար Սինգապուրում: Այս եկեղեցու յատակագիծը, ճարտարապետական մանրամասներն ու կառուցման պատմութիւնն ամենայն բծախնդրութեամբ վերարտադրւում են աշխատանքի 9-րդ գլխում (էջ 83-92): Ն. Ռայթը եկեղեցու կառուցման անհրաժեշտութիւնը բխեցնում է համայնքի ներքին կեանքի պահանջներից: Հաւատացեալ հայութիւնը մկրտութեան, հարսանիքի կամ մահուան արարողութիւնների իրականացման համար սկզբնական շրջանում Պենանգից, ուր 1824 թուականից գործող եկեղեցի կար, հրաւիրում էր հոգեւոր սպասաւորին, եւ կաթոլիկ կամ բողոքական եկեղեցու որեւէ սրահում իրականացւում էր անհրաժեշտ ծիսակատարութիւնը: Այնուհետեւ Նոր Ջուղայից ժամանած առաջին քահանան վարձակալութեամբ ընտրուած շէնքում սկսեց կատարել հայութեան հոգեւոր սպասարկումը: Անյարիր համարելով հոգեւոր գործունէութեան այս կերպը՝ ի վերջոյ

սկսուել է դրամահաւաք: Կալկաթայից, Մադրասից, Ռանգունից ու հայաբնակ այլ վայրերից հանգանակուած գումարներով 1836 թ. կառուցուել է եկեղեցի: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ եկեղեցին տուժել է ճապոնական ռմբակոծութիւնից: 1953 թ. Սինգապուրի կառավարութեան օգնութեամբ այն վերանորոգուել է եւ 1986 թ. եկեղեցու 150-ամեայ գոյութեան տօնակատարութեան կապակցութեամբ վերաբացուել, թէեւ 1980 թ. կառավարութեան կողմից նոր փողոցներ անցկացնելու կապակցութեամբ սեփականաշնորհուել էր շինութեանը պատկանող տարածքների զգալի մասը: Կառոյցը մինչեւ օրս կանգուն է: Այսօր եկեղեցին համարւում է Սինգապուրի հնագոյն յուշարձաններից մէկը, եւ նրա դռները բաց են հայ համայնքի կեանքով հետաքրքրուող զբօսաշրջիկների համար:

Սինգապուրի հայութիւնը գործուն մասնակցութիւն է ունեցել քաղաքի հասարակական կեանքի տարբեր բնագաւառներին: Յայտնի է նրանց ցուցաբերած ֆինանսական ու բարոյական մեծ աջակցութիւնը քաղաքային իշխանութիւններին Անգլիայի Վիկտորիա թագուհու այցելութեան առիթով, երեւոյթ, որը կառավարութեան կողմից արժանացել էր մեծագոյն խրախուսանքի:

1895 թ. արիւնարբու սուլթան Աբդուլ Համիդի կազմակերպած հայկական ջարդերից յետոյ համայնքը համընդհանուր հանգանակութիւն է կատարում, եւ Եգիպտոսի հոգեւոր առաջնորդ Թորգոմ Գուշակեանի միջոցով գումարը հասցւում է Թուրքիա (էջ 22), ապացուցելով, որ աշխարհի հեռաւոր անկիւններից մէկում ապրող հայութեան հայրենասիրական զգացմունքը չէր մարել:

Գրախօսուող աշխատանքում մեծ տեղ է յատկացուած համայնքում հայկական աւանդոյթների, սովորոյթների, ազգային դիմագծի ու լեզուի պահպանման խնդիրներին: Իհարկէ, հայապահպանութեան փորձերն անարդիւնք էին. համայնքն աստիճանաբար կազմալուծւում էր խառը ամուսնութիւնների, առեւտրական նոր օջախներ որոնելու նպատակով հայերի հեռանալու, երեխաների թուաքանակի սակաւութեան, հայերի այդ հատուածի ոչ երկարակեաց լինելու հետեւանքով:

Այս հրատարակութիւնը նշանակալի ներդրում է հայագիտութեան, մասնաւորապէս հայ գաղթօջախների պատմութեան ուսումնասիրման բնագաւառում:

ԱՂԱԻՆԻ ԺԱՄԿՈՉԵԱՆ

© National Library of Armenia